ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/83

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Գրիգորյանի

Չարենցավանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝

Ս. Հովհաննիսյանի (լիազորագիր տրված ՝ 20.12.2019թ.)

Քննելով Չարենցավանի համայնքապետարան կարիքների համար թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 10.12.2019թ. ներկայացված և 10.12.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/83 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 10.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2019 թվականի նոյեմբերի 25-ին Չարենցավանի համայնքապետարանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառմամբ՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու հայտարարվել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով «Գնանշման հարցում» գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել երեք մասնակից՝ կցելով գնային առաջարկներ ստորև բերված գներով.

Հ. հ.	Մասնակցի անվանում	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Էմ էյ էլ վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ	1000000	920000	-	1920000
	«Փրոմոուշն» ՍՊԸ	4000000	800000	-	4800000
	Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ	2700000	300000	-	3000000

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը պետք է կազմակերպվեին գնի նվազեցման միաժամանակյա բանակցություններ, մասնավորապես. «Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,»:

Ընկերությունը հայտնել է, որ վերոգրյալից ակնհայտ է, որ գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները պետք է կազմակերպվեն մասնակիցների անմիջական ներգրավմամբ, մինչդեռ 03.12.2019թ. Պավել Գաբրիելյանից (ով հանդիսանում է գնման ընթացակարգի մասնակից) ստացվել է ծանուցում, որտեղ նշված չէր բանակցությունների անցկացման վայրը, այլ նշվում էր նվազեցված գների ներկայացման վերջնաժամկետ և առաջարկվում էր վերանայված գները ներկայացնել էլ. փոստի միջոցով:

05.12.2019թ. ժամը 15:24-ին, բանակցությունների ավարտից 5 րոպե առաջ Պավել Գաբրիելյանից ստացվել է Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ի նոր գնային առաջարկը, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Չափաբաժնի համար	Մասնակցի անվանում	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ	1600000	260000	-	1860000

Ընկերությունը նշել է, որ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն սկզբունքորեն չի մասնակցել այս ոչ իրավաչափ գործընթացին: Ակնհայտ է շահերի բախման առկայությունը՝ Պավել Գաբրիելյանը միաժամանակ և մասնակից է հանդես գալիս և կատարում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին վերապահված լիազորություններ:

Միևնույն ժամանակ վերանայված գնային առաջարկը, եթե նույնիսկ ներկայացվեր գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ենթակա էր մերժման, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված է, որ «հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից»: Պավել Գաբրիելյան Կամոյի ԱՁ-ն իր գնային առաջարկով ներկայացրել է 2700.0 հազ դրամ ինքնարժեք, իսկ հետագայում այն նվազեցրել է 1100.0 հազ. դրամով՝ առաջարկելով 1600.0 հազ. դրամ: Եթե մասնակիցը գնային առաջարկը կազմելիս սխալվել է, ներկայացնելով սխալ ինքնարժեք, ապա հայտը ենթակա է մերժման:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը «Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ համարել ոչ իրավաչափ և պարտավորեցնել ընտրված մասնակից ճանաչել «Էմ էյ էլ վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ին՝ վերջինիս հետ կնքելով գնման պայմանագիր»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.12.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

3. Չարենցավանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Չարենցավանի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ.

Չարենցավանի համայնքապետարանը էլեկտրոնային, թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների գնման նպատակով կազմակերպել և իրականացրել է ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդիականության ժամկետ է սահմանվել 2019-11-25 21:03:00-ից մինչև 2019-12-02 11:00:00 ժամը ներառյալ:

Գնման պահանջի ծագման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ 13.11.2019թ.-ին Չարենցավան համայնքի ղեկավարի թիվ 195 կարգադրությամբ գրավոր սահմանվել է պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող (գնումները համակարգողի պարտականությունները դրվել է ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ Շուշանիկ Հարությունյանի վրա): Գնման հայտն ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում՝ 21.11.2019թ.-ին Չարենցավան համայնքի ղեկավարի թիվ 207 կարգադրությամբ ստեղծվել է գնահատող հանձնաժողով և գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները վերապահվել է ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ Շուշանիկ Հարությունյանին:

ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները Պավել Գաբրելյան Կամոյի ԱՁ-ն, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ն, «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 2 որոշմամբ մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման գործընթացն իրականացվել է «Գնումների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով և այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից (ինչպես նաև համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչներից) ոչ մեկը մասնակից չի եղել գնահատող հանձնաժողովի նիստին՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 3 որոշմամբ Պավել Գաբրելյան Կամոյի Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և սահմանվել է անգործության ժամկետ:

Վերը նշված գործողությունները կատարելով՝ Չարենցավանի համայնքապետարանը նպատակ է ունեցել իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում ձեռք բերել կարիքին համապատասխան ծառայություններ՝ համարժեք հատուցմամբ, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման եղանակով: Գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն հիմնվել է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ուսումնասիրելով «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 10.12.2019թ. ներկայացված բողոքը, գտնում ենք, որ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները.

1. Հանձնաժողովի քարտուղարի կողմից բավարար հայտեր ներկայացրած մասնակիցներին բանակցությունների անցկացման մասին ծանուցման մեջ բանակցությունների անցկացման վայրի նշված չլինելու հանգամանքը որևիցե խոչընդոտ չի առաջացրել մասնակիցների անմիջական ներգրավմանը և չի սահմանափակել նրանց մասնակցությունը բանակցություններին (եթե առկա է եղել նման ցանկություն), քանի որ

Պատվիրատուի գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը ի սկզբանե ներառված է եղել հրավերում, որի մասին բողոքաբեր մասնակիցը տեղեկացված է եղել (տվյալ փաստը նշված է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքաբեր մասնակցի կողմից ի լրումն ներկայացված փաստաթղթերում):

2. Ի հակադրություն բողոքում նշված այն փաստին, որ ծանուցման մեջ. մեջբերում «այլ նշվում էր նվազեցված գների ներկայացման վերջնաժամկետ և առաջարկվում էր վերանայված գները ներկայացնել էլ. փոստի միջոցով», հայտնում ենք, որ հանձնաժողովի քարտուղարի կողմից բավարար հայտեր ներկայացրած մասնակիցներին բանակցությունների անցկացման մասին ծանուցման մեջ բառացիորեն նշված է եղել. «Տեղեկացնում ենք նաև, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը՝ էլեկտրոնային վավեր ստորագրությամբ ներկայացնելով քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին՝ qaxgnumner@mail.ru»:

3. Միգուցե հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացրած ծանուցման շարահյուսությունը ընկալելի չի մատուցվել, սակայն վերը նշված ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի ութերորդ բաժնում հստակ նկարագրված է եղել բանակցությունների անցկացման կարգը:

4. Ինչ վերաբերվում է Պավել Գաբրելյան Կամոյի Ա/Ձ-ի կողմից 05.12.2019թ. ժամը 15:18-ին ներկայացրած վերանայված նոր գնային առաջարկին, ապա հայտնում ենք, որ գնային առաջարկում բառացիորեն նշված է եղել հետևյալը. «Ուսումնասիրելով ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, և հաշվի առնելով 2019 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը 15:30-ին կայանալիք բանակցությունները Պավել Գաբրելյան Կամոյի Ա/Ձ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով»: Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ միայն Պավել Գաբրելյան ֆիզիկական անձն է ներկայացել միաժամանակյա վարվող բանակցություններին:

5. Պավել Գաբրելյան ֆիզիկական անձի հետ շահերի բախում ուղղակիորեն հնարավոր չէր, քանի որ գնահատող հանձնաժողովը ստորագրել է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն և հանձնաժողովի քարտուղարին վերապահված

լիազորություններն իրականացվել են համայնքապետարանի աշխատակից Շուշանիկ Հարությունյանի կողմից:

6. Ինչ վերաբերվում է բողոքում նշված այն փաստին, որ եթե նույնիսկ վերանայված գնային առաջարկը ներկայացվեր գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ենթակա էր մերժման, քանի որ գինը չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, հայտնում ենք, որ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի սահմանում, որ բանակցություններին ներկայացած անձը չի կարող ներկայացնել նվազեցված նոր գին՝ բնականաբար նոր ինքնարժեք, նոր շահույթ և նոր ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

7. Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերում ներառված էլեկտրոնային փոստը՝ qaxgnumner@mail.ru, գրանցված է եղել «Microsoft Outlook» համակարգում, ուստի անուշադրության պատճառով ծանուցումներն իրականացվել են վերը նշված էլեկտրոնային փոստով:

Պատվիրատուն խնդրել է հաշվի առնելով վերոգրյալը՝ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

Չարենցավանի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.12.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Չարենցավանի համայնքապետարանի կողմից ՀՀ Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար էլեկտրոնային, թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ն, «Փրոմոուշն» ՍՊԸ-ն և «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հատկյալ գնային առաջարկները՝

Հ. հ.	Մասնակցի անվանում	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ	2 700 000	300 000	0	3 000 000
	«Փրոմոուշն» ՍՊԸ	4 000 000	800000	0	4 800 000
	«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ	1 000 000	920 000	0	1 920 000

4. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները՝ որոշել է կասեցնել նիստը և.

ա) մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

բ) բանակցությունների վարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 5-ը ժամը 15:30-ը:

5. 03.12.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Մասնակիցներին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակատեի դրույթներով՝ գների նվազեցման նպատակով հրավիրում են բանակցությունների: Բանակցությունների վարման վերջնաժամկետ է սահմանվում մինչև 2019 թվականի դեկտեմբերի 5-ը ժամը 15:30-ը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը՝

էլեկտրոնային վավեր ստորագրությամբ ներկայացնելով քարտուղարի էլեկտրոնային փաստի հասցեին՝ qaxgnumner@mail.ru:

6.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ 03.12.2019թ. էլեկտրոնային ձևով ծանուցվել է բավարար հայտ ներկայացրած մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վերջնաժամկետի մասին: Բավարար հայտ ներկայացրած մասնակիցներից «Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ-ն ներկայացել է բանակցություններին, որի արդյքունքում առաջարկված գնային առաջարկները հետևյալն են.

Ընտրված և հաջորդաար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումները	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
«Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ	1 600 000	260 000	0	1 860 000
«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ	1 000 000	920 000	0	1 920 000

7. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է, ղեկավարվելով Օրենքի 36-րդ հոդվածի դրույթներով, անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի 10.12.2019թ. բողոքը և ի լրումն գրությունը, Չարենցավանի համայնքապետարանի գրությունը, «ՁՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու

պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին ***էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների <u>վարման օրվա, ժամի և վայրի մասին</u>***,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան <u>ներկա մասնակիցների ներկայացրած գների</u>, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, ***որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները***,

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումներով հստակ սահմանվում են այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից միաժամանակյա բանակցությունների վարման դեպքում:

Ուսումնասիրելով «ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ» ծածկագրով ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ սահմանված պահանջի խախտում, մասնավորապես՝ 03.12.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Մասնակիցներին ուղղված էլեկտրոնային ծանուցման մեջ չի նշել՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որով խոչընդոտել է ընթացակարգի մասնակիցների անմիջական ներգրավմանը բանակցություններին՝ սահմանափակելով նրանց մասնակցությունը, մինչդեռ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլև նաև մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու բավականին երկար գործընթաց, նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները:

Նման պայմաններում գտնում եմ, որ բողոքի պահանջն սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերվում է բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ Պավել Գաբրիելյանը միաժամանակ և մասակից է հանդես գալիս և կատարում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին վերապահված լիազորությունները, ապա սույն մասով արձանագրում եմ, որ նման դիտարկումն անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված Չարենցավան համայնքի ղեկավարի 13.11.2019թ. թիվ 195 կարգադրության համաձայն՝ գնումները համակարգողի պարտականությունները դրվել է ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ Շուշանիկ Հարությունյանի վրա:

Միաժամանակ ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ 03.12.2019թ. ծանուցումը ստացվել է Ընթացակարգի մասնակից Պավել Գաբրիելյանից, ապա սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ սույն հարցի քննարկումը դուրս է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունների շրջանակներից:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ի կողմից բանակցության արդյունքում չէր կարող ներկայացվել ինքնարժեքից ցածր գին, ապա սույն մասով արձանագրում եմ, որ հաշվի առնելով այն փաստը, որ խախտվել է բանակցությունների վարման գործընթացը, հետևաբար նման պայմաններում հնարավոր չէ վերջինիս կողմից ներկայացված նոր գնային առաջարկը դիտարկել որպես պատշաճ ներկայացված գին և քննության առարկա դարձնել սույն բողոքի շրջանակներում:

Ինչ վերաբերում է «ԷՄ Էյ ԷԼ ՎԻ Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքի պահանջին, ապա գտնում եմ, որ այն ենթակա է մերժման, քանի որ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ի 10.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ՁՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ա/Ձ Պավել Գաբրիելյան Կամոյին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ի բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընտրված մասնակից ճանաչել « ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ին՝ վերջինիս հետ կնքելով գնման պայմանագիր, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**